ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՍԻՐԱՆՈՒՇ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆԻ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՓԱՐԻԶ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Սիրանուշ Շահմուրադյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության շուկայի զարգացման վարչության շուկայի հետազոտության բաժնի գլխավոր մասնագետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Փարիզ), 2022 թ. հունիսի 14-ից 19-ը:

4. **Հրավիրող կողմը.**

«Viva Technology» ընկերություն:

5. **Գործուղման նպատակը.**

2022 թ. հունիսի 15-ից 18-ը Ֆրանսիայի Հանրապետությունում (ք. Փարիզ) կայացած «Viva Technology 2022» միջազգային տեխնոլոգիական 6-րդ ցուցահանդեսին մասնակցելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները.**

«Viva Technology 2022» միջազգային տեխնոլոգիական ցուցահանդեսի շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել պետական և մասնավոր հատվածի ղեկավար կազմի ու ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության ներուժն ու զարգացման հնարավորությունները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել քննարկումները փոխգործակցության օրակարգի ձևավորման նպատակով:

Օտարերկրյա գործընկերների հետ ակտիվ բանակցություններ են իրականացրել ոչ միայն հայկական տաղավարում ներկայացված 9 ընկերությունների, այլև հայկական պատվիրակության կազմի մեջ մտնող 8 ընկերությունների ներկայացուցիչները, որոնք ցուցահանդեսին մասնակցում էին որպես այցելու:

Ցուցահանդեսի երկրորդ օրը՝ ս.թ. հունիսի 16-ին, «ՀԱՅԱՍՏԱՆ» տաղավար է այցելել Ֆրանկոֆոնիայի Միջազգային Կազմակերպության գլխավոր քարտուղար տիկին Լուիզ Մուշիկիվաբոն, ով մեծ հետաքրքրությամբ ծանոթացել է հայկական տաղավարում ներկայացված արտադրանքին և լուծումներին: Հարկ է նշել, որ տիկին Մուշիկիվաբոն Ֆրանկոֆոնիայի Միջազգային Կազմակերպության գլխավոր քարտուղարի պաշտոնում ընտրվել է 2018 թ. Երևանում կայացած Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի ընթացքում:

Ս.թ. հունիսի 17-ին հայկական տաղավար է այցելել Ֆրանսիայում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան տիկին Հասմիկ Տոլմաջյանը և ծանոթացել հայկական ընկերությունների կողմից տրամադրվող ծառայություններին և արտադրանքին: Վերջինս կարևորել է հայկական տաղավար այցելուների մեծ հոսքը, միջոցառման մասնակիցների հետաքրքրությունը հայկական ընկերությունների գործունեության նկատմամբ, ինչպես նաև կանանց ներգրավվածության աստիճանը տեխնոլոգիական ոլորտում:

Ս.թ. հունիսի 17-ին Ֆրանսիայի Իլ դե Ֆրանս շրջանի փոխնախագահ Օթման Նասրուն և Եվրոպական խորհրդարանի պատգամավոր Ֆրանսուա-Քսավիե Բելամին այցելել են հայկական տաղավար: Ծանոթանալով ներկայացված ստարտափ նախագծերին՝ վերջիններս հետաքրքրությամբ փորձարկել են հայկական ստարտափների նորարարությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միջոցառման շրջանակներում հայկական ոլորտային ընկերությունները հանդիպել են Ֆրանսիայի հայ ուսանողների միության անդամների հետ: Հանդիպմանը քննարկվել են համագործակցության և փորձի փոխանակման հնարավորությունները:

Ցուցահանդեսին հայկական ընկերությունների մասնակցությունը լուսաբանվել է. մասնավորապես՝ հայկական տաղավարի և ներկայացված ընկերությունների գործունեության մասին հոլովակ է նկարահանվել Ֆրանսիայի հայկական համայնքի ինտերնետային «Arménie Info» հեռուստաալիքի համահիմնադրի կողմից:

«France Arménie» ամսագրի հուլիսյան համարում լույս տեսնող հոդվածում ներկայացնելու համար հարցազրույց է տրամադրվել:

Փարիզի հայկական ռադիոն (AYP FM), տեղեկանալով Եվրոպայի ամենախոշոր տեխնոլոգիական միջոցառմանը Հայաստանի մասնակցության մասին, ցանկություն է հայտնել

ուղիղ կապի միջոցով եթեր հեռարձակել հայկական տաղավարում ներկայացված ստարտափների, վերջիններիս կողմից ներկայացվող արտադրանքի/լուծումների մասին պատմող տեսանյութ:

Միջոցառմանը Սիրանուշ Շահմուրադյանը համակարգել է նաև պաշտոնական հյուրերի, արտասահմանյան գործընկերների, լրագրողների, միջոցառման կազմակերպիչների հետ հանդիպումներն ու բանակցությունները, ապահովել հայկական ընկերությունների և նրանց արտադրանքի ներկայացումը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակելու քննարկումները բարձր տեխնոլոգիական ոլորտում համագործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրեր իրականացնելու վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

ՍԻՐԱՆՈՒՇ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ

22.06.2022թ.